Հավելված N 2
ՀՀ կառավարության 2025 թվականի
դեկտեմբերի 18-ի N 1908 - Ն որոշման

«**Հավելված N 3**
ՀՀ կառավարության 2010 թվականի
նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ՝ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՆՁՆՎՈՂ ԹՈՒՆԵԼՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԿԱՊԱԼԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ԳԼՈՒԽ 1.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների (այսուհետ՝ ավտոմոբիլային ճանապարհներ) վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների իրականացման և կատարված աշխատանքներն ընդունելու կարգը, ինչպես նաև պահպանման մրցույթներին մասնակից կապալառու կազմակերպություններին ներկայացվող նվազագույն տեխնիկական պահանջները:

2. Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման հիմնական խնդիրն է մշտապես՝ ամենօրյա ռեժիմով ապահովել կառույցի պահպանվածությունն այնպիսի վիճակում, որը համապատասխանում է անվտանգ և անխափան երթևեկության ապահովման պահանջներին:

3. Պետական կարիքների համար ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների կապալի պայմանագրերը (այսուհետ՝ կապալի պայմանագիր) կնքվում են 5 տարի ժամկետով այն կապալառու կազմակերպությունների հետ, որոնք բավարարում են սույն հավելվածի 4-րդ գլխով սահմանված տեխնիկական պահանջներին և ընտրվել են մրցութային կարգով՝ «Գնումների մասին» օրենքին համապատասխան:

4. Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների նկատմամբ հսկողությունը իրականացնում է սույն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգով նշանակված տվյալ ավտոճանապարհների պահպանման պատասխանատուն (այսուհետ՝ պատասխանատու):

5. Պայմանագիրը կնքելուց հետո պատվիրատուի և թունելի պահպանման աշխատանքներն իրականացնող կապալառու կազմակերպության (այսուհետ՝ կապալառու) միջև կնքվում է առանձին պահպանման հանձնվող թունելների հանձնման-ընդունման ակտ, որում արձանագրվում է թունելի առկա վիճակը:

ԳԼՈՒԽ 2

ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ՝ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՆՁՆՎՈՂ ԹՈՒՆԵԼՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

6. Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման հիմնական նպատակն է՝ թունելների կառույցների, սարքավորումների և այլ տարրերի վնասվածքների առաջացման կանխարգելումը, որի համար պետք է իրականացնել թունելների զննման, դիտարկման, ստուգման, խնամքի և ընթացիկ նորոգման աշխատանքներ:Նշված աշխատանքները պետք է իրականացվեն Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվ իրավական ակտերի պահանջներին, տեխնիկական նորմերին և կանոններին համապատասխան:

7. Կապալառուն պարտավոր է վարել թունելի պահպանման աշխատանքների էլեկտրոնային մատյան (այսուհետ՝ Մատյան)՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Երթուղային ցանցի մոդելավորման և ճանապարհային ցանցի ակտիվների կառավարման և սպասարկման աշխատանքների պլանավորման և վերահսկման» համակարգում՝ կապալի պայմանագրի պահանջներին համապատասխան: Մատյանում նշվում են կապալառուի պատասխանատուի կողմից զննման, դիտարկման և ստուգման արդյունքները:

8. Յուրաքանչյուր քաղաքացի իրավասու է թունելի վրա առկա թերություններն արձանագրել «Ճանապարհների տեղեկատու» (Arm roads info) բջջային հավելվածի միջոցով: Արձանագրած թերությունները գրանցվում են «Ճանապարհային ցանցի կառավարման համակարգ»-ում և դրա մասին տեղեկացվում է կապալառուին պատասխանատուի կողմից: Կապալառուի կողմից թերությունները վերացվում են սույն կարգի Աղյուսակ 3-ում նշված ժամկետում, ինչի մասին թերությունը վերացնելու օրը կապալառուն տեղեկատվություն է ուղարկում պատասխանատուին համապատասխան էլեկտրոնային փոստի հասցեին՝ կցելով թերությունների վերացման փաստը հավաստող լուսանկարներ (մինչև 10 հատ):

9. Թերությունները՝ սահմանված ժամկետում չվերացնելու դեպքում, դրանք պատասխանատուի կողմից ներառվում են ամսական ամփոփագրում և հիմք են հանդիսանում պատասխանատուի համար սույն կարգի Աղյուսակ 2-ում բերված տոկոսաչափերով նվազեցումներ կիրառելու համար:

10. Թերության վերացման վերաբերյալ տեղեկատվությունը՝ կից նկարներով ինքնաշխատ եղանակով ուղարկվում է նաև թերությունն արձանագրած քաղաքացու համապատասխան էլեկտրոնային փոստի հասցեին:

11. Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման հիմնական տեխնիկական պահանջները, որոնք պարտադիր են թունելների պահպանման կապալառու կազմակերպությունների (այսուհետ՝ կապալառու) կողմից կատարման համար, հետևյալն են՝

1) Զննումների և դիտարկումների ամենօրյա իրականացում: Զննումները և դիտարկումները պետք է կատարվեն կապալառուի կողմից նշանակված հերթափոխի պատասխանատու անձի կողմից ամեն օր: Հերթափոխի պատասխանատու անձը պարտավոր է զննումներ և դիտարկումներ կատարելու օրը գրանցումներ կատարել Մատյանում՝ նշելով զննումների և դիտարկումների արդյունքները և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ զննման արդյունքում հայտնաբերված անսարքությունները կամ թերությունները հերթափոխի ուժերով վերացնելու ուղղությամբ, երթևեկության անվտանգությանը վտանգ սպառնալու կամ արտակարգ իրավիճակների, վթարների դեպքում հնարավոր սեղմ ժամկետում պետք է տեղեկացնի պատվիրատուին՝ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու նպատակով.

<u>2) Ստուգման ապահովում:</u> Ստուգումն իրականացնում է կապալառուի թունելի պահպանման պատասխանատուն տվյալ հերթափոխի պատասխանատու անձի հետ համատեղ՝ առնվազն շաբաթական մեկ անգամ: Արդյունքները և հանձնարարականները (ներառյալ կատարման ժամկետները, որոնք պետք է համապատասխանեն սույն կարգի Աղյուսակ 2-ում նշված թերությունների վերացման ժամկետներին) գրանցվում են Մատյանում.

ա. Իրականացվող զննումների և ստուգման ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում թունելի երեսարկման և պատերի սվաղի վիճակին, երթևեկամասի և մայթերի ծածկի վրա ճաքերի ու փոսերի առկայությանը, շինարարական կոնստրուկցիաների ճկվածքներին, սվաղի կպածությանը կոնստրուկցիաներին, պատերին ու առաստաղին ամրացված սարքերի կայունությանը, ջրի հոսքի և կաթոցների ինտենսիվությանը: Զննման ժամանակ պետք է քարտեզագրել առկա բոլոր ջրահոսքերը, կաթոցները, խոնավացած հատվածները, նկարագրել դրանց սեզոնայնությունը, ջրի ելքերի ծավալները, հոսքերի փոփոխման շարժը, ձմեռային սեզոնին՝ սառցակալման ենթարկվելը: Թունելների երեսարկի վիճակի զննման ժամանակ անհրաժեշտ է քարտեզագրել առկա բոլոր վնասվածքները (ճաքեր, բետոնի քայքայված հատվածներ, բետոնի շերտազատման հատվածներ, պատերի սվաղի քայքայված հատվածներ, ամրանների բետոնե-պաշտպանիչ շերտի բացակայություն).

բ. Թունելի պատերի և առաստաղի վրա 0.5 մմ-ից լայն ճաքերի սահմանները նշվում են սվաղի վրա, իսկ արագ զարգացող ճաքերին ամրացվում են «փարոսներ»՝ դրանց զարգացման դիտարկումը իրականացնելու նպատակով: Ճաքերի վտանգավորության աստիճանը որոշվում է՝ ելնելով կառույցի կոնստրուկտիվ առանձնահատկություններից և հաշվի առնելով նրա վրա ազդող բոլոր գործոնները (լեռնային և հիդրոստատիկ ճնշում, սեփական քաշ, բետոնի կծկում, ջերմային ազդեցություն և այլն): Այն դեպքերում, երբ «փարոսների» զննման արդյունքում պարզվում է, որ ճաքերի զարգացման դինամիկան նորմատիվայինից բարձր է և վտանգված է թունելի նորմալ աշխատանքային ռեժիմը, թունելի պահպանման կապալառուն պարտավոր է, ներկայացնելով զննման արդյունքները, զեկուցել պատվիրատուին՝ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու նպատակով.

գ. Տարվա անձրևային սեզոնից առաջ և դրա ավարտին կապալառուի թունելի պահպանման պատասխանատուն ստուգում է ճակատամուտքերի հանույթների, լիցքերի, հենապատերի, ջրահեռացման համակարգի, լեռնային առուների և ճանապարհային կահավորանքի վիճակը և պահանջվող տեխնիկական նորմերին դրանց համապատասխանեցնելու նպատակով կատարված աշխատանքները:

<u>3) Խնամքի և ընթացիկ նորոգման ապահովում:</u> Թունելի կոնստրուկտիվ տարրերի, կառույցների, սարքավորումների, համակարգերի ընթացիկ նորոգման և խնամքի աշխատանքների հիմնական նպատակն է՝ կանխել դրանց ժամանակից շուտ մաշվածությունը: Այդ նպատակով կապալառուն պարտավոր է իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ՝ վերացնելով վնասվածքներն ու անսարքությունները.

ա. Որպես խնամքի և ընթացիկ նորոգման աշխատանքներ, կապալառուն պարտավոր է իրականացնել թունելի լվացման, աղբի, ձյան և սառույցի հեռացման, հակահրդեհային համակարգի, օդափոխության համակարգի, լուսավորման համակարգի, կապի և ազդանշանային համակարգի, թունելային շինությունների և կահավորանքի, երթևեկամասի և մայթերի (այդ թվում՝ թունելի երկու ճակատամուտքերից հաշված՝ 100 մետր երկարությամբ երթևեկամասի և մայթերի հատվածներ) շահագործման համար անհրաժեշտ վիճակում գտնվելու ապահովման, թունելի պատերի և կամարի վրա առաջացած թերությունների (ճաքերի և վնասվածքների) վերացման աշխատանքներ, իսկ ձմեռվա սեզոնին իրականացնել նաև թունելի պատերի, առաստաղի և հատակի վրա սառցաբեկորների և սառցալեզվակների հեռացում, որոնց ապահովման նպատակով Կապալառուն պարտավոր է տեղամասում իրականացնել շուրջօրյա հերթապահություն՝ պահպանելով սույն հավելվածով նախատեսված թունելի հիմնական տարրերի և կոնստրուկտիվ համակարգերի պահպանման հիմնական տեխնիկական պահանջները:

4) Երթևեկամաս, մայթեր և դրանց պահպանման հիմնական պահանջներն են՝

ա. երթևեկամասի և մայթերի ծածկը մշտապես պետք է լինի մաքուր և զերծ ավելորդ առարկաներից, ձնից, սառույցից ու շինարարական նյութերից: Արգելվում է շրջված կամ շարժվող

անվահրիչ եզրաքարերի առկայությունը: Ձյան տեղումների դադարումից 1 ժամ հետո ճակատամուտքից հաշված 100 մ երկարությամբ ճանապարհահատվածը պետք է լինի մաքրված ու մշակված հակամերկասառուցային նյութերով.

բ. արգելվում է 3 մմ-ից ավելի լայնությամբ ճաքերի առկայություն ծածկի մակերևույթում: Ճաքերը պետք է մաքրվեն սրածայր քերիչներով, փոշեզրկվեն և լցվեն բիտումային խառնուրդով կամ բիտումային մածիկով.

գ. փոսերի առկայությունը 1000 քմ ծածկի վրա պետք է լինի ոչ ավելի, քան 5 քմ: Փոսային նորոգման աշխատանքները պետք է կատարվեն երթևեկության նվազագույն ինտենսիվության պայմաններում, աշխատավայրը պետք է կահավորվի անհրաժեշտ ճանապարհային և լուսաազդանշանային համակարգով: Ծածկի փոսային նորոգումը պետք է կատարվի շինարարական նորմերի և տեխնիկական պայմանների պահանջներին համապատասխան և նույն տիպի ու հատիկային կազմ ունեցող ասֆալտբետոնյա խառնուրդով՝ ապահովելով շինարարական նորմերով նախատեսված անհրաժեշտ խտացումը: Այն դեպքում, երբ ծածկի փոսային նորոգման աշխատանքը կատարվում է թունելի ամբողջ երկարությամբ և լայնությամբ, տրանսպորտային միջոցների երթևեկությունը թունելով պետք է ժամանակավորապես դադարեցվի և իրականացվի լեռնանցքային վերգետնյա կրկնորդ երթուղով.

դ. երթևեկամասի ծածկի հետ անիվի կառչման գործակիցը պետք է տարեկան մեկ անգամ ստուգվի և լինի ոչ պակաս 0.6-ից կամ ավտոմեքենայի արգելակումից հետո մինչև նրա լրիվ կանգառը անցած ճանապարհը չպետք է գերազանցի 10, 24, 42 մ համապատասխանաբար ավտոմեքենայի 40, 60, 80 կմ/ժամ արագությամբ շարժվելու դեպքում.

ե. թունելի երթևեկամասը և մայթերը շաբաթական առնվազն 2 անգամ, իսկ պատերն ամսական մեկ անգամ պետք է լվացվեն մրից ու փոշուց՝ հակահրդեհային համակարգի միջոցով կամ ջրցան մեքենայով.

5) Ջրահեռացման համակարգ և դրա պահպանման հիմնական պահանջներն են՝

ա. ջրահեռացման համակարգի տարրերը մշտապես պետք է գտնվեն մաքուր վիճակում և ապահովեն ջրի ազատ հոսքը.

բ. թունելի ճակատամուտքերի եզրապատերի և հենապատերի հետնամասերում գտնվող վաքերը, ինչպես նաև ջրահեռացման լեռնային առուները պետք է լինեն մաքուր, զերծ տիղմից ու թափվածքներից և ապահովեն ջրի ազատ հոսքը.

գ. մայթերի և պաշտպանիչ գոտու եզրաքարերի ու թունելի առանցքով տեղադրված ցամաքուրդային և ջրթող խողովակները մշտապես պետք է լինեն մաքուր և զերծ տիղմի նստվածքներից ու թափվածքներից: Խցանումների հայտնաբերման դեպքում պետք է վերացնել դրանց առաջացման պատճառները.

դ. տիղմազտիչները մշտապես պետք է լինեն մաքուր և առանց ճաքերի.

ե. դիտահորերը մշտապես պետք է լինեն սարքին ու մաքուր և ապահովեն դրանցում տեղադրված սարքավորումների և հաղորդակցումների անխափան աշխատանքը.

գ. թունելային երեսարկման պատերից գրունտային ջրերի հոսքի, կաթոցի կամ խոնավացման տեղերի հայտնաբերման դեպքում, սվաղի հաստության հաշվին, առանց վնասելու մետաղական ցանցը, պետք է ստեղծել ջրահավաք փորվածք՝ մեկուսացնելով մակերեսը բիտումով կամ ջրադիմացկուն ներկով, ճկափողի շուրթը սոսնձով կպցնելով փորվածքի հատակին, իսկ մյուս ծայրը տեղադրելով մոտակա տիղմազտիչի մեջ: Այն դեպքում, երբ փողրակը չի ապահովում ջրահեռացումը (ջրի ելքը մեծ է 1-3 լիտր/ժամ) պատերի վրա արվում են ատամնաորմածքներ և դրանք միացվում են տիղմազտիչին: Թունելի առաստաղային մասից հոսող ջուրը հավաքվում է մետաղական կամ պլաստիկ կախովի խողովակներով, փողրակներով կամ ատամնաորմածքներով: Ջրի հոսքի վերացումից հետո ջրահավաք փորվածքները և ատամնաորմածքները մշակվում են ցեմենտի շաղախով: Պետք է արգելակել թունելի պատերից և առաստաղից առաջացող ջրահոսքերը և ջրի կաթոցները թունելի երթևեկամասի ու մայթերի վրա: Պարտադիր պետք է կատարել բոլոր ջրահոսքերի և կաթոցների կազմակերպված հեռացում դեպի թունելի դրենաժային համակարգ: Ձմեռվա սեզոնին նաև պետք է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ առկա ջրահոսքերի և կաթոցների սառցակալման դեմ: Մշտապես պետք է իրականացվեն ջրահոսքերի ջրամեկուսացման աշխատանքներ թունելի երեսարկի ողջ մակերեսով:

6) Օդափոխության համակարգ և դրա պահպանման հիմնական պահանջներն են՝

ա. ամսական առնվազն չորս անգամ պետք է ստուգել բոլոր օդափոխիչների աշխատանքը՝ շահագործման կանոններին դրանց համապատասխանությունը որոշելու նպատակով և անսարքությունների բացահայտման դեպքում իրականացնել վերականգնման աշխատանքներ:

բ. ամսական առնվազն չորս անգամ պետք է ստուգել օդափոխիչ հորանների և օդամուղ անցքերի մաքրությունն ու անցքերի փականների աշխատանքը և անսարքությունների բացահայտման դեպքում իրականացնել վերականգնման աշխատանքներ:

գ. ածխածնի օքսիդի (CO) սահմանային թույլատրելի պարունակությունը օդերևութաբանական անբարենպաստ պայմանների և տրանսպորտային միջոցների առավելագույն հոսքի դեպքում չպետք է գերազանցի 100 մլգ/խոր. մ: Ածխածնի օքսիդի (CO) պարունակությունը թունելում օպերատիվ որոշելու համար կապալառուն պարտադիր պետք է ունենա համապատասխան սարքավորում.

դ. օդամղիչներով մղվող օդի արագությունը թունելի տրանսպորտային ծավալում (եզրաչափերից ներս գտնվող հատվածում), չհաշված երթևեկող տրանսպորտային միջոցների ազդեցությունը, չպետք է գերազանցի 6 մ/վրկ.

ե. ամսական առնվազն չորս անգամ պետք է ստուգել օդափոխիչների աշխատանքի կառավարումը ինչպես կենտրոնական կառավարման խցիկից, այնպես էլ անմիջական օդափոխիչների խցիկից և անսարքությունների բացահայտման դեպքում իրականացնել վերականգնման աշխատանքներ:

7) Լուսավորման համակարգ և դրա պահպանման հիմնական պահանջներն են՝

ա. օրական առնվազն մեկ անգամ պետք է ստուգել լամպերի, վարդակների, խրոցների, վահանների առկայությունը և դրանց աշխատանքը, ինչպես նաև լուսավորման համակարգի ավտոմատ կառավարումը: Դրանց բացակայության կամ անսարքության դեպքում պետք է իրականացնել վերականգնման աշխատանքներ:

բ. թունելի լուսավորությունը պետք է մշտապես ապահովի բնական լուսավորությունից արհեստականին անցման սահունությունը: Այդ նպատակով, թունելի ճակատամուտքերից սկսած երթևեկամասի առանցքային հատվածում ծածկի հորիզոնական լուսավորությունը պետք է լինի Աղյուսակ 1-ում տրված պահանջներից ոչ պակաս.

Աղյուսակ 1. Թունելի հորիզոնական լուսավորության ռեժիմները

Լուսավորման ռեժիմ	Լուսավորությունը (լյուքսերով) ճակատամասից հաշված հեռավորության վրա (մետրերով)				
	0	25	50	75	100 և ավելի
1. Ցերեկային ժամեր	750	600	400	200	30
2. Գիշերային ժամեր	30	30	30	30	30

գ. երթևեկամասի ծածկի լուսավորման առավելագույն պայծառության հարաբերությունը հարևան հատվածի լուսավորման նվազագույն պայծառությանը չպետք է գերազանցի 3:1-ին.

դ. թունելների օդափոխության և լուսավորության ուղիները, ինչպես նաև սպասարկման տարածքները մշտապես պետք է ունենան լուսավորման հնարավորություն՝ զննումները, ուսումնասիրությունները և նորոգման աշխատանքները իրականացնելու համար.

ե. լուսավորության ցուցանիշները թունելում օպերատիվ որոշելու համար կապալառուն պարտադիր պետք է ունենա համապատասխան սարքավորում.

8) Կապի, հակահրդեհային, արգելափակման և ազդանշանային համակարգեր և դրանց պահպանման հիմնական պահանջներն են՝

ա. շաբաթական առնվազն երկու անգամ պետք է ստուգել թունելի ճակատամուտքերի մոտեցումներում տեղադրված անհրաժեշտ ճանապարհային նշանների առկայությունը և դրանց ընթեռնելիությունը: Անհրաժեշտության դեպքում դրանք փոխարինել նորերով:

բ. շաբաթական առնվազն երկու անգամ պետք է ստուգել թունելի հեռախոսակապի և բարձրախոսների աշխատանքը: Անսարքության դեպքում պետք է իրականացնել վերականգնման աշխատանքներ:

գ. մշտական հսկողություն ապահովել թունելի երկարությամբ խցիկներում տեղադրված մուտքն արգելող ազդանշանային համակարգի (ինչպես թունելի խցիկներում տեղադրված

կետերից, այդպես էլ կենտրոնական կառավարման խցիկից) նորմալ աշխատանքների վերաբերյալ.

9) Թունելային շինություններ, կահավորանք և դրանց պահպանման հիմնական պահանջներն են՝

ա. մայթերը պետք է լինեն մաքուր.

բ. ճանապարհային նշանները պետք է լինեն ընթեռնելի և տեղադրված Հայաստանի հանրապետության ներքին գործերի նախարարության հետ համաձայնեցված ճանապարհային նշանների տեղաբաշխման սխեմային համապատասխան: Խստիվ արգելվում է կապալառուի կողմից պետական ստանդարտներին չհամապատասխանող նշանների տեղադրումը.

գ. մայթերը և պաշտպանիչ գոտու եզրաքարերը պետք է լինեն նշագծված.

դ. թունելի առանցքային գծանշումը մշտապես պետք է լինի ընթեռնելի և համապատասխանի գործող նորմերին.

ե. թունելի մուտքային մասերում պատերը երկու կողմից պետք է ներկված լինեն լուսանդրադարձիչ սպիտակ ներկով՝ 100 մ երկարությամբ և 1.5 մ բարձրությամբ: Թունելի մյուս հատվածների պատերը պետք է ներկված լինեն համաձայն գործող նորմերի.

10) Թունելի երեսարկ, օդափոխության ուղիներ, հորիզոնական սալ, միջնորմներ և դրանց նորոգման հիմնական պահանջներն են՝

ա. թունելում առաջացած ճաքերը պետք է նորոգվեն՝ հետագա զարգացումը կանխելու նպատակով: Ըստ անհրաժեշտության ճաքերը պետք է սվաղվեն կամ կատարվի տորկրետացում մետաղական ցանցի և որմակերի հեղյուսների (անկերների) տեղադրումով.

բ. ամրանները պետք է փակված լինեն բետոնի պահպանիչ շերտով: Ամրանների բաց լինելու դեպքում պետք է վերականգնումը իրականացնել սվաղով կամ տորկրետացումով.

գ. թունելի երեսարկի վրա առաջացած վնասվածքները կամ թերությունները (բետոնի քայքայված կամ շերտազատված հատվածներ) պետք է վերականգնվեն՝ բետոնացման կամ տորկրետացման աշխատանքների իրականացմամբ.

դ. թունելի պատերի վրա առաջացած վնասվածքները կամ թերությունները (սվաղի քայքայված կամ շերտազատված հատվածներ) պետք է վերականգնվեն՝ սվաղման աշխատանքների իրականացմամբ:

12. Կապալառուն պարտավոր է՝

1) պահպանվող թունելի հարակից հատվածում ունենալ առնվազն մեկ մշտական հենակետ, որտեղ տեղակայված կլինեն մշտապես պահանջվող մեքենասարքավորումները.

2) թունելի հարակից հատվածում տեղակայել Աղյուսակ 3-ի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերում նշված մեքենասարքավորումները՝ ամբողջ տարվա ընթացքում, իսկ 5-րդ կետում նշվածը՝ ընթացիկ ձմեռային պահպանման ժամանակահատվածի համար.

3) ամբողջ թունելի երկարությամբ տեսանելիությունն ապահովելու նպատակով կապալառուն պարտավոր է թունելը կահավորել անհրաժեշտ քանակի տեսանկարահանող

սարքերով, որոնք գործում են HLS կամ WebRTC պրոտոկոլներով և ապահովում են կայուն, անընդհատ առցանց հեռարձակում Ճանապարհային ցանցի կառավարման համակարգում:,

ԳԼՈՒԽ 3

ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ՝ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՆՁՆՎՈՂ ԹՈՒՆԵԼՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳ

13. Թունելի պահպանման աշխատանքների ընդունումն իրականացվում է յուրաքանչյուր ամիս կապալի պայմանագրերով սահմանված կարգով և ժամկետում՝ հիմք ընդունելով պատասխանատուի կողմից սույն կարգի պահանջներին համապատասխան կատարված հսկողության և դրա արդյունքում կազմված պահպանման ամսական ամփոփագիրը (Ձև 1):

14. Թունելի պահպանման աշխատանքների նկատմամբ շուրջօրյա հսկողություն ապահովելու նպատակով պատասխանատուն և կապալառու կազմակերպությունները թունելի պահպանման պայմանագրերի գործողության ողջ ընթացքում կիրառում են «Ճանապարհային ցանցի կառավարման համակարգ» բջջային հավելվածը, որի պահանջները և պայմանները սահմանվում են թունելի պահպանման աշխատանքների կապալի պայմանագրով:

15. Թունելի պահպանման աշխատանքների նկատմամբ հսկողությունն իրականացվում է և աշխատանքները ընդունվում են հետևյալ կերպ՝

1) **Պահպանման դիտարկում**.

ա, Թունելի պահպանման դիտարկումները պատասխանատուի կողմից իրականացվում է յուրաքանչյուր ամիս՝ առնվազն երկու անգամ: Դիտարկման ժամանակ ստուգվում է թունելի պահպանման համապատասխանությունը սույն կարգի պահանջներին պահանջներին դիտարկումների Դիտարկումների ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում պատասխանատուի կողմից «Ճանապարհային ցանցի կառավարման համակարգ» բջջային հավելվածով տեղորոշվում է թերության տեղամասը և բնույթը, որն ուղարկվում է կապալառու կազմակերպության էլեկտրոնային փոստին՝ միաժամանակ թերությունն արտացոլելով «Ճանապարհային ցանցի կառավարման համակարգ» բջջային հավելվածում:

բ. թերության մասին էլեկտրոնային փոստը ստանալու օրվանից ոչ ուշ, քան սույն կարգի Աղյուսակ 2-ում նշված թերությունների վերացման համար սահմանված ժամկետում, կապալառու կազմակերպությունը պարտավոր է վերացնել թերությունը և այդ մասին թերության վերացման օրը ծանուցում ուղարկել պատասխանատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ կցելով թերությունների վերացման փաստը հավաստող լուսանկարներ (մինչև 10 հատ):

2) Թունելի պահպանման աշխատանքների կատարման ամսական ակտի ընդունում.

ա.թունելի պահպանման աշխատանքների դիտարկման արդյունքների հիման վրա պատասխանատուի կողմից կատարվում է թունելի պահպանման աշխատանքների գնահատում՝ արդյունքները ձևակերպելով թունելի պահպանման ամսական ամփոփագրում (Ձև 1).

բ. թունելի պահպանման աշխատանքների կատարման ամսական ակտը ընդունվում է կապալի պայմանագրով սահմանված աշխատանքների ընդունման համար սահմանված կարգով և ժամկետում:

16. Թունելի պահպանման աշխատանքները ընդունվում և վճարվում են ամբողջությամբ, եթե ապահովված են սույն կարգով սահմանված պահանջները և կապալի պայմանագրով սահմանված պահանջները:

17. Թունելի պահպանման աշխատանքները ընդունվում և վճարվում են մասնակիորեն, եթե պատասխանատուն կատարել է նվազեցումներ սույն հավելվածի Աղյուսակ 2-ում բերված տոկոսաչափերով կամ, եթե սույն կարգի այլ պահանջների կամ պայմանագրային այլ պարտավորությունների խախտման հիմքով կիրառվել է կապալի պայմանագրով սահմանված տույժ, տուգանքը::

Աղյուսակ 2. Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման պահանջների ապահովման արժեքների տոկոսային հարաբերակցությունը

N	**Թունելի կոնստրուկտիվ տարրերի թերությունները**	**Թերությունները հայտնաբերելուց հետո դրանց վերացման ժամկետները (օր)**	**% թունելի պահպանման արժեքից**
1.	**Երթևեկամաս և մայթեր, այդ թվում՝**		**15**
1)	Երթևեկամասի և մայթերի վրա աղբի, ավելորդ առարկաների, ձյան և սառույցի (ձմեռվա սեզոնին) առկայություն (վերացման պահանջվող առավելագույն ժամկետը՝ թերությունը հայտնաբերելուց հետո՝ 3 ժամ): Երթևեկամասի, մայթերի և պատերի վրա մրի ու փոշու առկայություն	1	10

2)	3 մմ-ից ավելի լայնությամբ ճաքերի առկայություն	2	2
3)	1000 քառ. մ ծածկի մակերեսի վրա 5 քառ. մ ավելի փոսերի առկայություն	5	3
2.	**Ջրահեռացման համակարգ , այդ թվում՝**		**15**
1)	Թունելի ճակատամուտքերում եզրապատերի և հենապատերի հետնամասում գտնվող վաքերում, ջրահեռացման լեռնային առուներում տիղմի, թափվածքների առկայություն	1	3
2)	Մայթերի ու պաշտպանիչ գոտու եզրաքարերի ու թունելի առանցքով տեղադրված ցամաքուրդային և ջրթող խողովակներում տիղմի և լցվածքների առկայություն	1	3
3)	Տիղմազտիչներում և դիտահորերում ճաքերի և ավելորդ առարկաների առկայություն	2	2
4)	Թունելային երեսարկման պատերի վրա գրունտային ջրերի հոսք և կաթոց, որոնք հնարավոր է վերացնել առանց կապիտալ վերականգնման	3	7
3.	**Օդափոխության, լուսավորման, կապի, հակահրդեհային, արգելափակման և ազդանշանային համակարգեր, այդ թվում՝**		**55**
1)	Օդափոխության համակարգի ցանկացած անսարքություն	3	25
2)	Պահանջվող լուսավորության ոչ պատշաճ ապահովում,	1	25

3)	Լուսավորման լամպերի անսարքության կամ բացակայության դեպքում	1 ժամ	1
4)	Կապի, հակահրդեհային, արգելափակման և ազդանշանային համակարգերի ցանկացած անսարքություն	1	4
4.	**Թունելային.շինություններ.և.կահավորանք, այդ թվում՝**		**5**
1)	Ճանապարհային նշանների պահանջվող քանակի բացակայություն կամ դրանց ոչ բավարար ընթեռնելիություն	1	2
2)	Մայթերի և պաշտպանիչ գոտու եզրաքարերի նշագծված չլինելը	1	1
3)	Թունելի առանցքային գծանշման բացակայումը կամ դրա ոչ բավարար ընթեռնելիությունը	1	2
5.	**Թունելի երեսարկ, օդափոխության ուղիների հորիզոնական սալ և միջնորմներ, այդ թվում՝**		**10**
1)	Թունելում չմշակված ճաքերի առկայություն	5	3
2)	Թունելում բաց ամրանների առկայություն	5	3
3)	Թունելում բետոնի կամ սվաղի քայքայված կամ շերտազատված հատվածների առկայություն	10	4

Ձև 1

ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ՝ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՆՁՆՎՈՂ ԹՈՒՆԵԼՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՍԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ճանապարհի անվանումը՝_____

Ճանապարհի վրա գտնվող պահպանվող թունելի տեղադրությունը (կմ)՝ _____

_____

Տարին _____ ամիսը _____

NN ը/կ	Թունելի պահպանման արժեքը	Նվազեցման տոկոսներն ըստ կոնստրուկտիվ տարրերի							Նվազեցման ընդհանուր տոկոսը	Նվազեցվող գումարը
		Երթևեկամաս և մայթեր	Ջրահեռացման համակարգ	Օդափոխության համակարգ	Լուսավորման համակարգ	Կապի, հակահրդեհային, արգելափակման և ազդանշանային համակարգեր	Թունելային շինություններ և կահավորանք	Թունելի երեսարկ, օդափոխության ուղիների հորիզոնական սալ և միջնորմներ		

Կատարողականի գումարը նվազեցումից հետո՝ _____ դրամ:

Ճանապարհների պահպանման պատասխանատուի լիազոր ներկայացուցիչ

_____

(պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն)

Կապալառուի լիազոր ներկայացուցիչ

_____

(պաշտոն, անուն, ազգանուն, ստորագրություն)

_____ _____ 20 թ.

ԳԼՈՒԽ 4

ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ՝ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՆՁՆՎՈՂ ԹՈՒՆԵԼՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԿԱՊԱԼԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

18. Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման մրցույթների առարկան է հանդիսանում թունելների՝ պահանջվող չափանիշներով պահպանումը ապահովող որակյալ կապալառու կազմակերպությունների ձեռքբերումը:

19. Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերման մրցույթներն անցկացվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

20. Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման կապալառու կազմակերպությունների ձեռքբերման մրցույթների մասնակիցներին ներկայացվող նվազագույն տեխնիկական պահանջներն են՝

1) Մասնակիցը պետք է ունենա նվազագույնը երեք տարվա աշխատանքային փորձ՝ թունելների շինարարության կամ թունելների պահպանման կամ երեք տարվա աշխատանքային փորձ՝ թունելների շինարարության կամ ավտոմոբիլային ճանապարհների շինարարության ոլորտներում.

2) Մասնակիցը նվազագույնը պետք է ունենա ավտոմոբիլային ճանապարհների շինարարության և շահագործման բնագավառի բարձրագույն մասնագիտական կրթությամբ առնվազն 2 մասնագետ.

3) Մասնակիցը նվազագույնը պետք է ունենա Աղյուսակ 3-ում նշված մեքենասարքավորումները՝

Աղյուսակ 3

N	**Անվանումը**	**Պահանջվող նվազագույն քանակը**	**Սեփականության ձևը**
1.	Ուղևորաբեռնատար ավտոմեքենա	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական
2.	Ավտոաշտարակ	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական կամ վարձակալած

3.	Ջրթող ավտոմեքենա	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական կամ վարձակալած
4.	Գլանակաձև՝ հորիզոնական խոզանակով, մաքրող, լվացող և հավաքող սարքավորում	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական
5.	Կոմբինացված ճանապարհային մեքենա՝ կահավորված ձյունամաքրիչ սարքավորմամբ, վերազինված ռետինե պաշտպանիչ շեղբով և փոշեցիրով, աղավազային խառնուրդի շաղացիր սարքավորմամբ	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական
6.	Ամբարձիչ	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական կամ վարձակալած
7.	Կոմպրեսոր կամ ճանապարհային ֆրեզ	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական
8.	Գլդոն (> 5 տ)	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական կամ վարձակալած
9.	Եռակցման համակարգ	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական
10.	Էլեկտրասնուցման համակարգի վերականգնման համար անհրաժեշտ սարքավորումներ	Նվազագույնը՝ 1 լրակազմ	Սեփական
11.	Ածխածնի օքսիդի (CO) պարունակությունը որոշելու սարքավորում	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական
12.	Լուսավորության ցուցանիշները որոշելու սարքավորում	Նվազագույնը՝ 1 հատ	Սեփական

21. Կախված թունելի երկարությունից և թունելի պահպանման աշխատանքների ծավալից Աղյուսակ 3-ում նշված մեքենասարքավորումների նվազագույն քանակից բացի մրցութային փաստաթղթերով կարող է սահմանվել լրացուցիչ քանակի մեքենասարքավորումներ ունենալու պահանջ:

22. Բացի սույն կարգի Աղյուսակ 3-ում նշված սեփական մեքենասարքավորումներից՝ թույլատրվում է վարձակալել մնացած պահանջվող մեքենասարքավորումների քանակի մեկ չորրորդը: Կապալառուի կողմից վարձակալությամբ ձեռք բերվող մեքենասարքավորումները, վարձակալության ժամանակահատվածում, չեն կարող օգտագործվելու վարձատուի կողմից կամ տրամադրվել այլ կազմակերպությանը կամ անհատին:

23. Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման մրցույթների համար այլ որակավորման չափանիշների սահմանումը, ինչպես նաև դրանց գնահատումը կարգավորվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

24. Ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ձեռքբերման մրցույթներին մասնակցելու համար հայտատու կազմակերպությունները պետք է ներկայացնեն աշխատանքների ինքնարժեքի հաշվարկ ըստ ստորև բերված Ձև 2-ի:

Ձև 2

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող թունելների պահպանման աշխատանքների ինքնարժեքի հաշվարկման ձև

N	**Թունելի անվանում**	**Պահպանման աշխատանքների արժեքը (դրամ) պայմանագրի ամբողջ ժամկետի համար**

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

22.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ